ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԽՆԿՈՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Լոռու մարզ
Խնկոյան համայնք, փողոց 1 թիվ 19
էլ.Փոստ՝ khnkoyan.lori@mta.gov.am
☎ 093476682

ՈՐՈՇՈՒՄ

«24» դեկտեմբերի 2019թ. N 22

ԱՆԱՀԻՏ ԳԵՎՈՐԳԻ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ ԱՆՉԱՓԱՀԱՍ ԿԱՄՈ ԿԱՐԱՊԵՏԻ ՂՈՒԿԱՍՅԱՆԻ ԽՆԱՄԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ հոդվածի 1-ին մասով, 35-րդ հոդվածի 1-ին մասով և 37-րդ հոդվածի 1-3-րդ մասերով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016թ. հունիսի 2-ի թիվ 631-Ն որոշմամբ հաստատված խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությամբ, հաշվի առնելով, որ անչափահաս Կամո Կարապետի Ղուկասյանը բնակվում է Խնկոյան համայնքում և գտնվում է տատի՝ Անահիտ Գևորգի Ղուկասյանի խնամքի ներքո, նրանց ծնողները՝ Կարապետ Լյովայի Ղուկասյանը և Ամալյա Արտուշի Ղուկասյանը, գտնվում են Ռուսաստանի Դաշնությունում, հիմք ընդունելով Խնկոյան համայնքի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 23.12.2019թ. N 1 արձանագրության դրական եզրակացությունը և Անահիտ Գևորգի Ղուկասյանի (ծնված 15.09.1961թ.) դիմումը անչափահաս Կամո Կարապետի Ղուկասյանի (ծնված 19.07.2014թ.) նկատմամբ խնամակալություն սահմանելու մասին՝

որոշում եմ.

1. Անահիտ Գևորգի Ղուկասյանին նշանակել անչափահաս Կամո Կարապետի Ղուկասյանի (ծնված՝ 19.07.2014թ.) խնամակալ։

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
Խնկոյանի համայնքի ղեկավար
Վ. Համբարձումյան
23.12.2019թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

ՈՐԴԵԳՐՄԱՆ, ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Կայացավ Լոռու մարզի Խնկոյան համայնքի որդեգրման, խնամակալության և հոգեբարձության հանձնաժողովի նիստը:

Մասնակցությամբ բոլոր անդամների՝

հանձնաժողովի նախագահ՝	Վ. Համբարձումյանը
հանձնաժողովի քարտուղար՝	Ա. Բաբայանը
հանձնաժողովի անդամներ՝	Գ. Հակոբյանը /բնակիչ/
	Օ. Իսպիրյանը /բուժքույր/

Լսեցին- անչափահաս՝ Ղուկասյան Կամո Կարապետի /ծնվ. 19.07.2014թ./ խնամակալ տատիկին՝ Անահիտ Գևորգի Ղուկասյանին /ծնվ. 15.09.1961թ./ հանձնելու մասին:

Նկատի ունենալով, որ անչափահաս Կամո Կարապետի Ղուկասյանի ծնողները Կարապետ Լյովայի Ղուկասյանը և Ամալյա Արտուշի Ղուկասյանը գտնվում են Ռուսաստանի դաշնությունում, Կամո Կարապետի Ղուկասյանին խնամում է իր տատիկը՝ Անահիտ Գևորգի Ղուկասյանը ելնելով նրանց շահերից հետագա խնամքի անհրաժեշտությունից հանձնաժողովը.

որոշում է՝

Անահիտ Գևորգի Ղուկասյանին նշանակել անչափահաս Կամո Կարապետի Ղուկասյանի խնամակալ:

Խնկոյան համայնքի որդեգրման, խնամակալության և հոգեբարձության հանձնաժողովի անդամներ.

հանձնաժողովի քարտուղար՝	Ա. Բաբայան
հանձնաժողովի անդամներ՝	Գ. Հակոբյան
	Օ. Իսպիրյան

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽՆԿՈՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Խնկոյան համայնք, հեռ. 093 476682

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«26» դեկտեմբերի 2019թ. N 23

ԽՆԿՈՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ԲԱՇԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով և առաջնորդվելով Խնկոյան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 24-ի «Խնկոյան համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին>> թիվ 58-Ն որոշումով՝

որոշում եմ.

1. Հաստատել Խնկոյան համայնքի 2020 թվականի բյուջեի եկամուտների և ծախսերի եռամսյակային բաշխումը համաձայն /հավելված 1, 2/:
2. Հաստատել համայնքի ծախսերի նախահաշիվները՝ ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման հոդվածների:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ